# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ

**12 սեպտեմբերի 2018 թվականի, N 176-Ա**

## 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի, 35-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝

***ո ր ո շ ու մ  ե մ.***

1. 2018 թվականի սեպտեմբերի 17-ին ժամը 16:00-ին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքապետարանի վարչական շենքում՝ համայնքի ղեկավարի աշխատասենյակում, գումարել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու արտահերթ դռնբաց նիստ (զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա. Տիտանյան):

2. 2018 թվականի սեպտեմբերի 17-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգում ընդգրկել հետևյալ հարցերի որոշումների նախագծերը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2018թ., սեպտեմբերի 12,**
**ՀՀ Լոռու մարզ, Օձուն համայնք, գ. Օձուն**

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի
2018 թվականի սեպտեմբերի 12-ի N 176-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

1. <<ԾԱՌԱԳԱՅԹ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ Մ6-ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԱՎԵԼՈՐԴ ՀՈՂԱԳՐՈՒՆՏԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՂԲԸ ԿՄ 43+300-ԻՑ ԿՄ 43+700-Ն ԵՎ ԿՄ 41+900-ից ԿՄ 42+100-Ն ԸՆԿԱԾ ՀԱՏՎԱԾ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(*զեկուցող՝ Ա. Տիտանյան*)

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-Ի N 40-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

(*զեկուցող՝ Ա. Տիտանյան*)

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**